ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ, ԺԱՄԸ 14:00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **Արմավիր համայնքի ղեկավար՝** **Վարշամ Սարգսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող առաջին տեղակալ՝** **Արսեն Պետրոսյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Վալոդյա Գրիգորյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝** **Լյուդվիկ Յայլոյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝** **Էդգար Հովհաննիսյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի հունիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:**

/Արգիշտի Մեխակյան
ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2025 թվականի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացված աշխատանքների մասին:**

/Ա. Հակոբյան
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

3. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և իրականացվելիք աշխատանքների մասին:**

/Լ. Մուշեղյան
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Զարգացման ծրագրերի մշակման և
Իրականացման բաժնի պետ/

4. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում 2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին:**

/Լ. Հարությունյան
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Իրավաբանական բաժնի պետ/

5. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում քաղաքաշինության բնագավառում իրականացված մշտադիտարկման արդյունքների մասին:**

/Դ. Ավետիսյան
ՀՀ Արմավիրի մարզպետի
Աշխատակազմի քաղաքաշինության
հողաշինության և ենթակառուցվածքների
կառավարման վարչության պետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի հունիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին»** որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի հունիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N647–Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12-րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի հունիսի 10-ի նիստի օրակարգը:**

Օրակարգային երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝ Արայիկ Հակոբյանը:

Նա նշեց, որ 2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 9008347.3 հազ.դրամ՝ 2024թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 7229613.6հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 1778733.7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 6988910,0 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 6308832,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 680077,7 հազ. դրամով, կատարվել է 77,6%-ով, նախորդ տարվա 87,3%-ի համեմատ: 2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 2364171,4հազ.դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 2202338,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 161833,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 2038977,6 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 1894341,9 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 144635,7 հազ. դրամով, կատարվել է 86,2%-ով, նախորդ տարվա 86.0%-ի համեմատ:

2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 478588,5 հազ.դրամ՝ 2024թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 474501,5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 4087,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 341425,3 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 332977,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 8447,9 հազ. դրամով, կատարվել է 71,3%-ով, նախորդ տարվա 70,2%-ի համեմատ: 2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 952990,1 հազ.դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 886401,6 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 66588,5 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 710972,0հազ. դրամ , նախորդ տարվա նույն

ժամանակահատվածում հավաքագրված 683574,9 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 27397,1 հազ. դրամով, կատարվել է 74,6%-ով, նախորդ տարվա 77,1%-ի համեմատ:

2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 167209,4 հազ.դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 133413,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 33796,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025թվականի դրությամբ կազմել է 232729,4 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 157727,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 75002,3 հազ. դրամով, կատարվել է 139,2%-ով, նախորդ տարվա 118,2 %-ի համեմատ: 2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 41651,0 հազ.դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 41000,0հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 651,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 33982,6 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված. 36925,2հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 2942,6 հազ. դրամով, կատարվել է 81,6%-ով, նախորդ տարվա 90,1%-ի համեմատ: 2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 80660,6 հազ.դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 75975,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 4685,3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 64850,0 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 65860,7 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 1010,7 հազ. դրամով, կատարվել է 80,4%-ով, նախորդ տարվա 86,7%-ի համեմատ:

2025թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 516378,3 հազ.դրամ՝ 2024թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 477917,9 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 38460,4 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 31.05.2025 թվականի դրությամբ կազմել է 409908,1 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 383046,3 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 26861,8 հազ. դրամով, կատարվել է79,4%-ով, նախորդ տարվա 80,1%-ի համեմատ:

Օրակարգային երրորդ հարցի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը զեկուցեց՝

2025 թվականի ընթացքում իրականացվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի ընթացքի և իրականացվելիք աշխատանքների մասին ամփոփ տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ ի**րականացվել են 2025 թվական տեղափոխված 2022-2024թթ. հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ**: Մասնավորապես՝ յուրաքանչյուր ամիսը մեկ, իսկ 2022թ. սուբվենցիայի ծրագրերի համար ամիսը երկու անգամ մանրամասն տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Համաձայն ս. թ. հունիսի 2-ին կատարված մշտադիտարկման արդյունքների, պատկերը հետևյալն է.

Ընդամենը 2022-2024թթ. **- 102 ծրագրից /368 ենթածրագրից/**

- ավարտված - 256 ենթածրագիր (2024թ.-ին՝ 62, 2025թ. -ին՝ 29)
- հիմն. աշխ. ավարտված, լրացուցիչը՝ ընթացքի մեջ – 3 ենթածրագիր
- ավարտական փուլում - 16 ենթածրագիր
- ընթացքի մեջ - 38 ենթածրագիր
- չսկսված - 55 ենթածրագիր:

2025թ. ընթացքում Կառավարության մարտի 13-ի, մարտի 27-ի, ապրիլի 30-ի և մայիսի 22-ի նիստերի ընթացքում, կառավարության համապատասխան որոշումներով Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է 572,315.3 հազար դրամ՝ սուբվենցիայի ծրագրերի կառավարության մասնաբաժնի համաֆինանսավորման նպատակով:

Համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերջնական ուսումնասիրությունից հետո 2025թ. հունիսի 10-ի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի

աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից կատարվել է ծրագրերի կառավարության մասնաբաժնի ֆինանսավորում՝ 572,314,992 ՀՀ դրամ, կատարողականը կազմում է 100%:

2025թ. ֆինանսավորվել են 7 համայնքի 18 բնակավայրի 15 ծրագրեր՝ 21 ենթածրագրերով:

Կառավարության որոշումներով հատկացված գումարների բաշխումը՝

Ըստ սուբվենցիայի ծրագրերի տարեթվերի.

Ծրագրի հաստատման տարեթիվը	*Ծրագիր/ ենթածրագիր*	*ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված գումարը /դրամ/*	*10.06. 2025թ. դրությամբ փաստացի վճարված գումարը /դրամ/*	*տարբերություն*
2022թ.	***1/1***	***10,340,000***	***10,339,857***	***143***
2023թ.	***5/5***	***293,264,800***	***293,264,758***	***42***
2024թ.	***9/15***	***268,710,500***	***268,710,377***	***123***

Ըստ համայնքների.

Համայնքը	***Ծրագրերի թիվը***	***ենթածրագրերի թիվը***	***ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված գումարը /դրամ/***	***10.06. 2025թ. դրությամբ փաստացի վճարված գումարը /դրամ/***	***Տարբերություն***
Արմավիր	***4***	**6**	**195,438,700**	**195,438,603**	**97**
Մեծամոր	***2***	**5**	**27,276,500**	**27,276,500**	**0**
Վաղարշապատ	***1***	**1**	**108,272,400**	**108,272,400**	**0**
Արաքս	***4***	**5**	**182,810,500**	**182,810,432**	**68**
Խոյ	***1***	**1**	**27,179,300**	**27,179,300**	**0**
Փարաքար	***1***	**1**	**10,340,000**	**10,339,857**	**143**
Բաղրամյան	***2***	**2**	**20,997,900**	**20,997,900**	**0**

ԸՆԴԱՄԵՆԸ -7 համայնք, 18 բնակավայր	***15***	***21***	**572,315,300**	**572,314,995**	**308**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 8 ծրագրի/8 ենթածրագրի համար վճարման փաթեթ՝ կառավարության մասնաբաժնի հատկացման համար՝ շուրջ 154. 2 մլն դրամ ընդհանուր արժեքով, գումարները կհատկացվեն կառավարության առաջիկա նիստերի ընթացքում: Նոր վճարման փաթեթների ներկայացման աշխատանքները շարունակվում են:

Ընթացիկ տարում շարունակվել է **2025 թվականի սուբվենցիաներ** ստանալու նպատակով ամբողջական փաթեթների ներկայացումը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Ընդհանուր առմամբ. կարգով սահմանված ժամկետում և լրացուցիչ ներկայացվել է 29 ծրագիր/132 ենթածրագրով՝ շուրջ 14 մլրդ 129 մլն դրամ արժեքով, որից 6 մլրդ 512 մլն դրամը համայնքի, 7 մլրդ 573 մլն դրամը կառավարության մասնաբաժինն է և 44. 3 մլն դրամը մասնավորի/բնակիչների կողմից կատարվող ներդրումը: Ծրագրերն ընդգրկում են մարզի 8 համայնքների 51 բնակավայրեր:

Ի կատարումն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.04.2025թ. հանձնարարականի, տրվել է հնարավորություն 2025թ. սուբվենցիայի ծրագրի շրջանակում մարզի 4 համայնքների բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման սուբվենցիայի ամբողջական փաթեթներ ներկայացնելու համար՝ Քաղաքաշինության կոմիտեի կամ ՀՏՀՀ տիպային նախագծերով: Ներկայումս Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Փարաքար համայնքի Պտղունք և Մուսալեռ բնակավայրերի նոր մանկապարտեզների կառուցում սուբվենցիայի ծրագրի ամբողջական փաթեթը՝ Քաղաքաշինության կոմիտեի 100 սան/տեղ (4 խումբ) հզորությամբ նախակրթական ուսումնական հաստատության տիպային նախագծով: Նույն հանձնարարականի հիման վրա ակնկալվում է ստանալ Մեծամոր համայնքի Արազափ և Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրում մանկապարտեզների կառուցման ծրագրերի ամբողջական փաթեթներ:

(Վաղարշապատ համայնքը չի ներկայացնելու թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզի կառուցման ծրագրի ամբողջական փաթեթը՝ համայնքի ֆինանսական վերլուծության արդյունքում)

Համայնքը	*ծրագրերի թիվ*	*ենթածրագրերի թիվը*	*Ծրագրի ընդհանուր արժեքը (II փուլ- ամբողջական փաթեթ), ՀՀ դրամ*	*Համայնքի մասնակցությունը*	*Կառավարության մասնակցությունը*	*Մասնավորի մասնակցություն*
Արմավիր	**3**	**20**	**2 498 877 714**	1 184 058 044	1 314 819 671	
Մեծամոր	**4**	**28**	**3 298 639 876**	1 524 126 132	1 738 261 236	36 252 508
Վաղարշապատ	**1**	**1**	**1 179 209 700**	766 486 305	412 723 395	
Խոյ	**1**	**2**	**245 909 760**	86 068 416	159 841 344	
Արաքս	**13**	**49**	**3 681 658 538**	1 697 283 656	1 984 374 882	
Փարաքար	**1**	**2**	**1 478 113 060**	443 433 918	1 034 679 142	
Բաղրամյան	**4**	**28**	**1 677 013 719**	789 533 584	879 421 278	8 058 857
Ֆերիկ	**2**	**2**	**69 880 726**	20 749 778	49 130 948	
Ընդամենը	**29**	**132**	**14 129 303 093**	**6 511 739 832**	**7 573 251 897**	**44 311 365**

Իրականացվում են ոլորտային գերատեսչությունների կարծիքների և դիտողությունների հիման վրա 2025թ. սուբվենցիոն ծրագրերի լրամշակված փաթեթների հավաքագրման և

ուսումնասիրման աշխատանքներ: Կատարված աշխատանքի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել 22 ծրագրի լրամշակված փաստաթղթեր, աշխատանքները շարունակվում են:

10. 06. 2025թ. դրությամբ միջգերատեսչական հանձնաժողովի 12.03.2025թ. 06.05.2025թ. և 12.05.2025թ. նիստերի ընթացքում՝

- Դրական հավանության են արժանացել թվով 7 ծրագրեր/21 ենթածրագրերով՝ 1. 7 մլրդ դրամ ընդհանուր արժեքով (մայիսի 6-ի և 12-ի նիստերի արձանագրությունը դեռևս պաշտոնապես չենք ստացել):
- Դրական պայմանով հավանության են արժանացել թվով 4 ծրագրեր/46 ենթածրագրերով՝ 4. 8 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանը վերաբերում է ըստ առաջնահերթությունների ծրագրերի ենթածրագրերի տարանջատմանը՝ 2025 և 2026 թվականներին իրականացնելու համար: Արդեն իսկ համայնքապետարանների կողմից ստացվել են համապատասխան տեղեկանքները և ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Արմավիր համայնքի դրական պայմանով հավանության արժանացած 2 ծրագրերի իրականացման մրցույթները հայտարարված են, մրցույթները մեծամասամբ կայացել են, կնքվել են պայմանագրերը և Արմավիր քաղաքի Հ.Ավետիսյան փողոցի Ս.Շահումյան-Խ.Աբովյան հատվածի խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցման շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են:

- Հետաձգվել է 2 ծրագրի/14 ենթածրագրով հարցի քննարկումը՝ Մեծամոր և Բաղրամյան համայնքների բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման ծրագրերը:

Իրականացվել են **2026 թվականի համայնքների** տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի նախնական հայտերի և տեխնիկական բնութագրերի համայնքապետարաններից հավաքագրման և ուսումնասիրման աշխատանքները: 2025թ. հունիսի 10-ի դրությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել 2026թ. սուբվենցիոն ծրագրերի 13 նախնական հայտեր /66 ենթածրագրերով/, որոնք ընդգրկում են մարզի 4 համայնքների 45 բնակավայրեր: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 7.84 մլրդ դրամ:

Ըստ համայնքների՝

Համայնքը	*ծրագրերի թիվ*	*բնակավայրերի թիվը*	*ենթածրագրերի թիվը/նախնական*	*Ծրագրի ընդհանուր արժեքը (I փուլ), ՀՀ դրամ*	*Համայնքի մասնակցությունը*	*Կառավարության մասնակցությունը*
Արմավիր	2			**1 926 900 000**		
Մեծամոր	**3**	**30**	**31**	**5 390 000 000**	2 932 500 000	2 457 500 000
Վաղարշապատ						
Խոյ	**1**	**1**	**2**	**113 404 867**	73 713 164	39 691 703
Արաքս	**8**	**13**	**32**	**2 328 409 000**	1 069 329 050	1 259 079 950
Փարաքար						
Բաղրամյան						
Ֆերիկ	**1**	**1**	**1**	**10 000 000**	5 500 000	4 500 000
Ընդամենը	**13**	**45**	**66**	**7 841 813 867** **9,768,713,867**	**4 081 042 214**	**3 760 771 653**

Հայտեր չեն ներկայացվել Վաղարշապատ, Փարաքար և Բաղրամյան համայնքներից, Արմավիր համայնքի կողմից 2 ծրագրային հայտ է ներկայացվել երեկ՝ փողոցների ասֆալտապատման և խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցման՝ շուրջ 1. 93 մլրդ դրամ:

07.05.2025թ. ստացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականը՝ ՀՀ կառավարության 16. 11. 2006թ. 1708-Ն որոշմամբ հաստատված կարգով նախնական հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետները հաշվի չառնելու, Կառավարության որոշմամբ նոր ժամկետներ սահմանելու մասին: Հանձնարարականը ՀՀ Արմավիրի մարզպետի շրջաբերական գրությամբ ներկայացվել է համայնքների ղեկավարներին:

Օրակարգային չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյանը:

Նա նշեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N2881-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2025 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 28-ի ՆՄՈ/289-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում 2025 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և լրացված հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ **http://armavir.mtad.am/:**

Աշխատանքային խմբի կողմից իրավական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

Իրականացված հսկողության արդյունքում հաշվետու ժամանակահատվածում խախտումներ չեն արձանագրվել, իսկ աշխատանքային խմբի կողմից ցուցաբերվել է մեթոդական աջակցություն, մատուցվել է համապատասխան խորհրդատվություն և տրվել են պարզաբանումներ տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես սեփական, այնպես էլ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով:

Օրակարգային վերջին հարցի վերաբերյալ զեկույց ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի Աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Դավիթ Ավետիսյանը:

Վերջինիս զեկույցում նշվում էր՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են մշտադիտարկման գործառույթներ 2022-2025թթ.. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող 57 օբյեկտներում, մասնավորապես՝ 2022 թվականի սոսբվենցիոն ծրագրերով 5 օբյեկտ, 2023 թվականի՝ 15 օբյեկտ, 2024 թվականի՝ 37 օբյեկտ:

2025 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի հայտերի հաստատման գործընթացը դեռևս գտնվում է ընթացքի մեջ և վարչության կողմից մասնագիտական ուսումնասիրություններ են կատարվում համայնքների կողմից ներկայացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներում՝ համապատասխան գերատեսչություններ ներկայացնելուց առաջ:

Մշտադիտարկում է իրականացվել նաև ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ մարզում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Քաղաքաշինության կոմիտեի կողմից իրականացվող դպրոցաշինության, մանկապարտեզների և մարզադպրոցի կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև ճանապարահաշինության ոլորտում Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի կողմից իրականցվող շինարարական աշխատանքներում, մասնավորապես՝ թվով 13 դպրոցներում, թվով 5 մանկապարտեզներում, թվով 1 մարզադպրոցում և թվով 5 ճանապարհներում:

Մշտադիտարկում իրականացված օբյեկտների ցանկը ըստ համայնքների՝

<u>Արմավիր համայնք</u>

Նորավան գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում :

Լենուղի գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում

<u>Մեծամոր համայնք</u>

Մրգաշատ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցում

Երասխահունի գյուղի կրթահամալիրի կառուցում

Հայկավանի գյուղի կրթահամալիրի կառուցում

Նոր Արտագերսի գյուղի կրթահամալիրի կառուցում

Նոր Կեսարիայի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Գետաշեն գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում

Հ-15, /Մ-5/(Նորապատ) -Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ13+000 - կմ20+000 հատվածի հիմնանորոգում

Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ. Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի կմ6+200 - կմ7+400 հատվածի հիմնանորոգում 1,2 կմ

Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ. Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի 4,2 կմ հատվածի հիմնանորոգում

Տ-3-19, Արևիկ(Տ-3-50)-/Հ-15/(Տանձուտ) ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+400 հատվածի հիմնանորոգում

<u>Վաղարշապատ համայնք</u>

Էջմիածին քաղաքի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոցի կառուցում

Էջմիածին քաղաքի Վ. Ռշտունու անվ. թիվ 11 հիմնական դպրոցի կառուցում

Տ-3-29, /Մ-5/ (Զվարթնոց թաղամաս) – /Հ-13/ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+400 հատվածի հիմնանորոգում

<u>Արաքս համայնք</u>

Ջրառատ գյուղի Թ. Խաչատրյանի անվ. միջնակարգ դպրոցի կառուցում

Ակնաշեն գյուղի մանկապարտեզի կառուցում

Տ-3-41, /Մ-3/ (Լուսագյուղ) – Ջրառատ ավտոճանապարհի կմ0+500-կմ2+600 հատվածի հիմնանորոգում

<u>Խոյ համայնք</u>

Գեղակերտ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Ամբերդ գյուղի Հ. Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոցի կառուցում

Ծաղկունք գյուղի մանկապարտեզի կառուցում

Հովտամեջ գյուղի մանկապարտեզի կառուցում

<u>Փարաքար համայնք</u>

Այգեկ գյուղի Մ. Մովսիսյանի անվ. միջնակարգ դպրոցի վերանորոգում

Նորակերտ գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգում

Փարաքար գյուղի մարզադպրոցի կառուցում

<u>Բաղրամյան համայնք</u>

Վանանդ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Վերը նշված շինարարական օբյեկտներում արձանագրված բոլոր թերությունները ներկայացվել են պատվիրատուներին:

Կատարվել են 114 այցելություններ սուբվենցիոն ծարագրերով իրականացվող շինարարական օբյեկտներում: թվով 27 օբյեկտներում արձանագրել ենք 81 թերություններ, որոնք հետագայում աշխատանքային ընթացակարգով վերացվել են:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան աշխատակիցների հետ համատեղ մշտադիտարկման աշխատանքներ ենք իրականացրել ավարտված և ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերով իրականացվող թվով 20 շինարարական օբյեկտներում, համապատասխան ֆինանսավորման նպատակով:

Վարչության մշտական հսկողության տակ է գտնվել 2025թ. ընթացքում իրականացվող Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների, ընդհանուր՝ 387,3կմ-ից 94,95կմ ամառային պահպանություն /փոսալցման, աղբի, օտար առարկաների հեռացման, կողնակների հարթեցման/ և 130,7կմ ձմեռային պահպանության աշխատանքները:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատակիցների կողմից գույքագրվել են ՀՀ Արմավիրի մարզով անցնող միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ճանապարհամերձ հատվածները, որի արդյունքում արձանագրվել են ճանապարհներին կից հատվածներում քաղաքացիների կողմից կուտակված շինարարական և կենցաղային աղբ, կամ այլ տեղից տեղափոխված հողային գրունտներ, որի վերաբերյալ համապատասխան գրություն է ուղարկվել համայնքներ արձանագրված թերթուրթյունները վերացնելու համար:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր, Խոյ, Փարաքար և Արաքս համայնքների բնակավայրերի համար տրվել են եզրակացություններ՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ/**ընդամենը 46.95 հա**/:

Օրակարգային հարցերի քննարկման ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2025-06-18 16:18:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության,
փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝
Աննա Միքայելյան